



ՀՐԱՏՈՒ
ՕԻԱ
ՄԱՅԻՍ

ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ
NEWSLETTER
MAY

2
0
2
3



19726 SHERMAN WAY, WINNETKA, CA 91306

E-mail officeoia1976@gmail.com

ԱՆՑԱՆ ԶԵՆԱՐԿՆԵՐ PAST EVENTS

**ԱՆՆԱԽԸՆԹԱՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳԻՇԵՐ ՄԸ
ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷՉ**

Գրի առաւ՝ Մարիէթ Օհանէս



Հինգշաբթի, Մայիս 11, 2023ին, կազմակերպութեամբ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբին, տեղի ունեցաւ այս տարուան չորրորդ Ընտանեկան գիշերը որուն հովանաւորներն էին՝ Տէր եւ Տիկին Յակոբ (Ճէյմս) եւ Մակի Սոյաք, ի յիշատակ իր մօր եւ կէսորջ՝ Տկ. Անժէլ Յովակիմեանի:

Ներկաները ճաշակեցին իտալական համեղ «դդմաճը, գետնախնձորը, ձիթապտուղը, «բիցցան» թթուաշը եւ այլ ուտեստեղէններ, ինչպէս նաեւ համեղ քաղցրեղէնը պատրաստուած եւ նուիրուած՝ Տկ. Միպէլ Թորոսի կողմէ, նաեւ համեղ շոքոլաները պատրաստուած եւ նուիրուած՝ Մարիէթ Օհանեսի կողմէ ի յիշատակ իր հանգուցեալ մօր:

Շուրջ 100 հոգիներու ներկայութեամբ մտերմիկ գիշերը ճոխացաւ, Մայրերու օրուան տօնակատարութեանց մասին տեղեկութիւններով, զուարճախօսութիւններով եւ կարճ պատմուածքներով ու զանազան խաղերով: Միութեան Հոգաբարձու Տորթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան կատարեց բացման խօսքը իսկ Միութեան քարտուղարուհի՝ Մարիէթ Օհանեսը հանդիսավարեց երեկոն: Ձեռնարկը ճոխացաւ երկու ասմունքող տիկիներու արտասանութիւններով՝ Ալին Տօնիկեանի եւ Հիլտա Աճըիլաչի:

Շնորհակալութիւն բոլոր ներկաներուն:

Նաեւ աղջաններն ու այլ աղանդերները պատրաստող եւ հրամցնող՝ Տկ. Անէթ Քէօշքերի:

Մայրերու Օր

Մայիս ամիսն է, որ մայրանալով՝ ծնունդ կու տայ բնութեան. անհկա կը ծաղկի ու կը գեղեցկանայ: Հայ ժողովուրդն ալ, զուգահեռ մը գծելով բնութեան ծաղկումին եւ մայրերուն միջեւ, այս ամիսը նուիրուած է հայ մօր, ապրիլ ամիսէն ետք:

Մայրերու մեծարումը դարաւոր պատմութիւն ունի:

17-19-րդ դարերուն Մեծ Բրիտանիոյ մէջ Մեծ պահքի երկրորդ Կիրակի օրը կը նշուէր, այսպէս կոչուած «Մայրական Կիրակին» (անգլ.՝ Mothering Sunday), որ նուիրուած էր երկրի բոլոր Մայրերու մեծարման:

ԱՄՆ-ի մէջ Մայրերու օրը առաջին անգամ հրապարակային խրախուսած է ամերիկացի Ճուլիա Ուորտ Հոուլը 1872-ին: Ըստ անոր՝ «Մայրերու օր»-ը յանուն խաղաղութեան Մայրերու միասնութեան օրն է ամբողջ աշխարհի մէջ: Ճուլիա Ուորտի հայեցակարգը լայն աջակցութիւն չտուցաւ ԱՄՆ-ի, եւ այլ երկիրներու մէջ:

1907-ին ամերիկուհի Աննա Ճարվիսը Ֆիլատելֆիայէն ի յիշատակ իր մօրը՝ հանդէս եկաւ մայրերուն մեծարելու նախաձեռնութեամբ: Աննան նամակներ գրեց պետական հաստատութիւններուն, օրէնսդիր մարմիններուն եւ սկանաւոր անձերու՝ առաջարկելով տարուան մէջ գոնէ մէկ օր նուիրել Մայրերու մեծարման:

1910-ին Վրրճինիա նահանգը առաջինը Մայրերու օրը հռչակեց իբրեւ պետական տօն: 1914-ին ԱՄՆ-ի նախագահ Ուուորո Ուիլսոնը Մայիս ամսուայ երկրորդ Կիրակին յայտարարեց ազգային տօն՝ ի պատիւ բոլոր ամերիկացի Մայրերու:

Ամերիկայէն ետք Մայիսի երկրորդ Կիրակին սկսաւ տօնել եւս 23 երկիր, ինչպէս՝ Պահրէյնը, Հոնքոնկը, Հնդկաստանը, Մալեզիան, Մեքսիքը, Նիքարակուան, Արաբական Միացեալ Էմիրութիւնները, Օմանը, Փաքիստանը, Քաթարը, Սեուտական Արաբիան, Սինկափուրը, Աստրալիան, Ուրուգուայիան, Էսթոնիան: Աւելի քան երեսուն երկիր այլ այդ տօնը կը նշէ այլ օրերու:



ՏԵՆՉԱ ՉՐՆԱՐ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ ԷՍԱԵԱՆ ԼԻՍԷԻ ՏՆՕՐԵՆՈՒՅԻ

2023-06-02



ՊԵՅՈՂՈՒԻ սուրբ եկեղեցեաց Նորընտիր թաղային խորհուրդը իրերայաջորդ կարգադրութիւններով կը ջանայ՝ մօտաւոր անցեալի ցնցումի տարիներէն վերջ Նոր ոստումի շրջան մը ապահովել Էսաեան վարժարանին համար: Ինչպէս ծանօթ է, առաջին հերթին դպրոցին համար նշանակուած էր Նոր հիմնադրի ներկայացուցիչ մը: Այդ պաշտօնը վստահուած էր Նորընտիր թաղային խորհուրդի կազմէն ԼԵՆԱ ԵՆԻԵՐԿԱՆԻՆ: Այժմ, կարգը եկած է վարժարանի մասնագիտական անձնակազմի փոփոխութիւններուն: Արդէն կը Նախատեսուէր, որ Նոր տնօրէնուհիներ նշանակուին Էսաեան վարժարանի միջնակարգի եւ լիսէի բաժիններուն համար: Թաղային խորհուրդը տեղեկացուցած է, որ ճշդած է Նոր անուն մը տնօրէնուհիի պաշտօնը յանձնելու համար, սակայն առայժմ պաշտօնապէս չի հրապարակուիր:

Էսաեան վարժարանի վաղուան բաժակի օրուան ընդառաջ այս սիւթը անմիջական հետաքրքրութեան առարկայ է: Շրջանաւարտից հաւաքի Նախօրեակին բոլորի ուշադրութեան առարկայ է այս սիւթը: Անպաշտօն աղբիւրներէ կը տեղեկանանք, որ յառաջիկայ տարի Էսաեան լիսէի տնօրէնուհիի պաշտօնը պիտի ստանձնէ Տենչա Չրնար: Համայնքային շրջանակներու լսումները կը հաստատեն այս լուրը՝ որքան որ ալ թաղային խորհուրդը առայժմ զերծ մնայ պաշտօնական հրապարակում մը կատարելէ: Էսաեանի ընտանիքը, ընդհանրապէս, ողջունելի կը համարէ այս նշանակումը, քանի Տենչա Չրնար հաստատութեան սաներէն է եւ պոլսահայ կրթական կեանքէն ներս կը վայելէ բարի համբաւ:

Այժմ կը սպասուի թաղային խորհուրդի պաշտօնական յայտարարութեան:



ՄԻՋԼԻՍԵԱԿԱՆ ԿՈԼԵՅՊՈԼԻ ԵՒ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԽԱՆԴԱՎԱՌ ՄՐՏԱՇԱՐՔՆԵՐ՝ ՄԻՍԻԹԱՐԵԱՆ ԿԱՐԺԱՐԱՆԻ ՊԱՐՏԵԶԻՆ ՄԵՋ



2023 կրթական շրջանի աւարտին, ամառնամուտի տրամադրութիւններով պայմանաւորուած մթնոլորտի մէջ, Միսիթարեան վարժարանի նախաձեռնութեամբ վերջին օրերուն տեղի ունեցաւ համայնքային լիսէներու միջեւ մրցաշարք մը: Հիւրընկալ վարժարանի պարտեզին մէջ տեղի ունեցան հանդիպումները: Մեր հինգ լիսէներու վոլէյպոլի իգական եւ պասքէթպոլի արական կազմերը հանդես եկան խանդավառ մրցապայքարի մը մթնոլորտին մէջ: Կոլէյպոլի մէջ առաջնութիւնը նուաճեց Կեդրոնականի կազմը: Պասքէթպոլի մէջ աւարտականը տեղի ունեցաւ Միսիթարեանի եւ Կեդրոնականի միջեւ: Տղաքը իսկապէս մեծ յաջողութեամբ հանդես եկան եւ բոլոր անոնք, որոնք կը դիտէին, վառ տպաւորութիւններ ունեցան այս մրցումէն: Աւարտին 1 նիշով առաւելութեան հասան միսիթարեանցիները: Այս անմոռանալի աւարտականէն վերջ անոնք ուրախութիւնը ունեցան իրենց դպրոցի պարտեզին մէջ առաջնութեան բաժակին տիրանալու՝ մինչ ընդհանուր գնահատանքէն անմասն չմնացին նաեւ կեդրոնականցիները:

Միսիթարեան վարժարանի լիսէի բաժնի տնօրէնուհի եւա Օրագեան եւ բոլոր կազմակերպիչները ջերմ մթնոլորտի մը մէջ հիւրընկալեցին աւարտական խաղերուն եւ անոնց յաջորդած մրցանակաբաշխութեան մասնակիցները: Ներկայ էր նաեւ Միսիթարեան միաբանութեան Իսթանպուլի վանատունէն Հայր Յակովբոս Ծայրագոյն Վարդապետ Զօփուրեան:



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Մայիս 28ի Օրինակով Ապահովենք ՀայուԹեան Ինքնորոշման

**Իրաւունքը
by Asbarez Staff
May 28, 2023**



Հայաստանի անկախության հռչակումը եւ Հայաստանի Ա. Հանրապետության հաստատումը՝ Մայիս 28, 1918ին, մեր ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին մարմնացումն էր: Դարերով օտար լուծի եւ բռնատիրության տակ ապրած հայութիւնը այս քայլերով իր պատմության նոր էջ մը գրեց, կերտելով հայրենիք մը եւ իր արդար դիրքը գրաւելով աշխարհի պետութեանց շարքին մէջ:

Մեր նորագոյն պատմության մէջ Մայիս 28ի սխրանքին կրնայ մօտենալ միայն 1988ին ծնունդ առած Արցախի Ազատագրական շարժումը, որ իսկապէս առաջնորդեց Արցախի ազատագրումին եւ Արցախի Հանրապետության հաստատումին, շնորհիւ իր ինքնորոշման իրաւունքը խլելու արցախցիներու կամքին, որ շատ նման էր նոյն տարածքին մէջ 70 տարի առաջ իրագործուածին:

Այդ տարիներէն ետք, հայութեան հայրենիքը եւ հայութիւնը դիմագրաւեցին շարք մը հզօր ցնցումներ: Մինչ Մայիս 28, 2018ին կը տօնէիք Սարդարապատի, Բաշ Ապարանի եւ Դարաքիլիսէի մէջ 100 տարի առաջ ապահովուած յաղթանակները, հայութիւնը նաեւ ոտքի ելած էր՝ աւելի լաւ ապագայ մը կերտելու պահանջով, նկատի ունենալով այն իրողութիւնը, որ 27ամեայ հանրապետութիւնը սխալ ընթացքի մէջ էր եւ կ'անտեսուէին տարրական իրաւունքները եւ ընկերային արդարութիւնը:

Սակայն վերջին հինգ տարիներուն, ականատես դարձանք անկախության գաղափարն ու Հայաստանի գոյութիւնն իսկ վտանգի տակ դնող իրադարձութիւններու: 2020ի 44օրեայ պատերազմը ուժգին հարուած մը հասցուց մեր հայրենիքին եւ յատկապէս Արցախին, որ մինչեւ այսօր կը շարունակէ պաշարուած մնալ:

Այս պայմաններուն մէջ, պարզապէս մտահոգիչ ըլլալէ աւելի են վարչապետ Նիկոլ Փաշինեանի այն յայտարարութիւնները, թէ Հայաստան պատրաստ է Արցախի նկատելու Ատրպէյճանի մէկ մասնիկը եւ այն պնդումները, թէ Արցախի 120,000 բնակչութիւնը պետք է իր հարցերը լուծէ Պաքուի հետ բանակցելով:

Փաշինեանի յայտարարութիւնները ոչ միայն խորացուցին Հայաստանի եւ Արցախի ժողովուրդներուն միջեւ վիհը, այլ նաեւ հարուած մը հասցուցին հայութեան ինքնորոշման իրաւունքին: Մէկ նախադասութեամբ, վարչապետը ոտնակոխ ըրաւ Արցախի ազատության համար պայքարած տասնեակ հազարաւորներու զոհողութիւնը:

Ան ապա փորձեց արդարացնել իր դիրքորոշումը, պնդելով, թէ իրարու սահմանները ճանչնալու Հայաստանի եւ Ատրպէյճանի քայլով Հայաստան վերջապէս իր հողերուն «կալուածագիր»ը պիտի ունենայ, բան մը, որ, ըստ իրեն, Հայաստան չէր ունեցած վերջին 35 տարիներուն եւ հայութիւնը՝ վերջին հազարամեակներուն: Այս պնդումը հարցականի տակ կը դնէ 1990ին յայտարարուած Հայաստանի Անկախության հռչակագիրը եւ 1991ի անկախութիւնը, ինչ որ միջազգային համայնքին կողմէ հաստատուած իրողութիւն մըն է:

Իբրեւ մէկը, որ ինքզինք կը համարէ Հայաստանի մէջ ժողովրդավարութիւնը ամրապնդող քաղաքական գործիչ, վարչապետը մոռցած կը թուի ըլլայ ժողովրդավարութեան հիմնական սկզբունքներէն մէկը՝ ինքնորոշման իրաւունքը: Արցախի ժողովուրդը, հետեւելով 1918ին անկախութիւն հռչակած հայութեան օրինակին, այդ իրաւունքը ի գործ դնելով 1991ին անկախութիւն հռչակեց, իսկ 1992ին Հայաստանի խորհրդարանը շեշտեց, թէ կարելի չէ Արցախը վերադարձնել Ատրպէյճանին:

Կասկած չկայ, որ Հայաստան կը դիմագրաւէ գոյութենական տագնապ մը, որ նման է դար մը առաջ հայութեան դիմակայած տագնապին: Յաւելեալ վնասներու դէմ դնելու լաւագոյն միջոցն է ի մի բերել Հայաստանի եւ Հայկական Սփիւռքի ամբողջական կարողականութիւնը, երաշխաւորելու համար Հայաստանի պետական կառոյցներուն, ներառեալ՝ բանակին, ապահովութիւնը: Միայն այդ ճամբով կարելի է բարգաւաճում, յառաջդիմութիւն եւ դիմադրականութիւն երաշխաւորել:



Մայիս 28 1918ի յստակ դասերէն մէկն էր այն, որ իր արդար իրաւունքներուն համար պայքարելու հայութեան կամքը անսասան է: Պետք է յառաջ ընթանանք այն համոզումով, որ ունինք հայրենիք պահելու իրաւունքը եւ արժանի ենք անոր, առանց պահուրտելու այնպիսի համաձայնութիւններուն ետին, որոնք ամէն օր կ'անտեսուին զայն ստորագրող միւս ենթականերուն կողմէ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, առաջնորդութեամբ Արամ Մանուկեանի, կրցաւ հայութիւնը մղել իր ինքնորոշման եւ անկախ պետութիւն ունենալու իրաւունքներուն համար պայքարին:

Այս հանգրուանին, իւրաքանչիւր հայու պարտականութիւնն է պայքարիլ իր այդ իրաւունքներուն համար, որպէսզի, ինչպէս Պարոյր Սեւակ ըսած է, սերունդները իրենք զիրենք ճանչնան Սարդարապատով:

(Լուսանկարը՝ Մեթիու Քարանեանին)

Յարգելի անդամ/բարեկամ
Եթէ կը փափաքիք տեղեակ մնալ Պոլսահայ Միութեան
ձեռնարկներէն եւ գործունէութիւններէն,
հաճեցէք այցելել Միութեան կայքէջը
www.oia.net

Dear OIA member/friend

If you would like to stay informed of OIA events and activities please
visit OIA website
www.oia.net



Mr. Hayk Sahakyan
(May 15, 1926 İstanbul – April 18, 2023 Los Angeles)



On behalf of the
Organization of Istanbul Armenians,
we express our deepest condolences to
the family of the deceased.
The following donations were made in
his memory.

	NAME	Cash	AMOUNT
<u>OIA, GENERAL FUND</u>			
Mr.& Mrs.	Sahak Tuna		300.00
Mr.& Mrs.	Ohannes K. Avedikian		100.00
Mrs.	Talin Gochian		100.00
Mr.& Mrs.	Varujan Guregyan		100.00
Dr.& Mrs.	Arto Ersan Hacherian		100.00
			700.00

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

- «ՏԵՕՆԵՐԻ ԳԻՇԵՐ»
 - Միոլթեան
«ԳՈՒՐԵԱՆ ՏԱՆԻՔԸ»
- Զանգուլցեալ
Յեղասպանագետ՝
ՓՐՕՖ. ՎԱՅԱԳՆ
ՏԱՏՐԵԱՆԻ 4ՐԴ
ՏԱՐԵԼԻՑԻ Ոգեկոչում
ՕԳՈՍՏՈՍ 13, 2023

ԶԿՆՈՐԱՆԵՐՈՒ ԳԻՇԵՐ
Միոլթեան
«ԳՈՒՐԵԱՆ ՏԱՆԻՔԸ»

UPCOMING EVENTS

- "DONER NIGHT"
at Kurian Terrace
Commemoration of late Prof.
Vahakn Dadryan's 4th
anniversary of passing
August 13th, 2023
at OIA hall.

FISHERMEN'S NIGHT

SEPTEMBER, 2023
at Kurian Terrace